

Ի գիտություն հասարակությանը

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը, նպատակ ունենալով տեղեկացնել հանրությանը հանձնաժողովի 2020 թվականի աշխատանքային ծրագրով 4-րդ եռամսյակում նախատեսված աշխատանքների մասին, ստորև ներկայացնում է այդ աշխատանքների հակիրճ բովանդակությունը:

Օրենսդրական փոփոխությունների նախաձեռնման աշխատանքների մասով

- Նախատեսվում է նախաձեռնել «Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին» օրենքում փոփոխությունների գործընթաց՝ ուղղված հանձնաժողովի աշխատանքների առավել արդյունավետ կազմակերպմանը, այդ թվում՝ վարչարարության ընթացքում ի հայտ եկած բացերի, անհստակությունների վերացմանը, հանձնաժողովի նիստերի կազմակերպման ու անցկացման մեխանիզմների կատարելագործմանը և այլն: Առանձին կարգավորումներ են նախատեսվում հանձնաժողովի նիստի վերաբերյալ ծանուցման, հանձնաժողովի որոշումների կատարման, հանձնաժողովի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված՝ պետական կամ տեղական ինքնակառավարման մարմիններից հանձնաժողովին տեղեկատվության տրամադրման պարտավորության ամրագրման վերաբերյալ:
- Հանձնաժողովի անկախության և կարգավորման գործառույթների արդյունավետության բարձրացմանն ուղղված միջոցառումների շրջանակում կտարվեն աշխատանքներ՝ ուղղված «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» օրենքում առաջարկվող փոփոխությունների ընդունման ու կիրառման մասով՝ հանձնաժողովի գործունեության ֆինանսավորման աղբյուրների ձևավորման և միջոցների ծախսման մեխանիզմների կատարելագործման նպատակով:

Նշված բարեփոխումներն իրենց հերթին կնպաստեն կարգավորման արդյունավետության բարձրացմանը, այդ թվում նաև՝ սպառողների շահերի առավել արդյունավետ պաշտպանությանը:

Հաջորդ օրենսդրական փոփոխությունը նախատեսվում է կատարել «Էներգետիկայի մասին» օրենքում: Մասնավորապես՝

- Նախատեսվում է օրենքում որպես լիցենզիայի գործողության դադարեցման հիմք ամրագրել նաև օրինական ուժի մեջ մտած ակտի հիման վրա արտադրության լիցենզիա ստանալու, դրանում կառուցման (վերակառուցման) ժամանակահատված ամրագրելու համար հիմք հանդիսացած անհրաժեշտ իրավունքը դադարելու դեպքում (այդ թվում՝ նշված իրավունքը հավաստող փաստաթղթի գործողության ժամկետը չերկարաձգվելու պարագայում) լիցենզիայի դադարեցման հնարավորություն:
- Նախաձեռնվող փոփոխություններով կառաջարկվի նաև օրենքում առավել պարզեցնել լիցենզիա ունեցող անձի բաժնեմասի (բաժնետոմսի, փայի) կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման, ինչպես նաև լիցենզավորված գործունեության իրականացման համար անհրաժեշտ գույքի կամ դրա նկատմամբ իրավունքի օտարման, այլ կերպ փոխանցման կամ գրավադրման բոլոր գործարքների համաձայնեցման գործընթացն ու ժամկետները:

Ընթացիկ աշխատանքների մասով

Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի աստիճանական ազատականացմանն ուղղված օրենսդրական փոփոխություններով պայմանավորված, ինչպես նաև հանձնաժողովի կողմից հանրային ծառայությունների ոլորտում իրականացվող կարգավորման գործառույթների շրջանակում աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով՝ նախատեսվում է վերանայել հանձնաժողովի մի շարք իրավական ակտեր, նպատակ ունենալով նպաստել ՀՀ մեծածախ և մանրածախ շուկաների արդյունավետության բարձրացմանը, տարածաշրջանում միջպետական առևտրի զարգացմանը:

Մասնավորապես, նախատեսվում է լրամշակել Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի համապատասխան որոշումներով սահմանված՝

- Էներգետիկայի բնագավառում Հայաստանի Հանրապետության էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի պայմանագրի (օֆերտա) օրինակելի ձևը,
- Էլեկտրաէներգետիկական մեծածախ շուկայի առևտրային կանոնները,
- Էլեկտրաէներգետիկական շուկայի հաղորդման ցանցային կանոնները,
- Սպառողի էներգատեղակայանքերով էլեկտրական էներգիան ենթասպառողների կամ բաշխողի այլ ցանցերի սնման համար փոխանցելու կարգը,
- Բնական գազի մատակարարման և օգտագործման կանոնները,
- Խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման կանոնները:

Միաժամանակ, հանձնաժողովի կողմից հանրային ծառայությունների ոլորտում իրականացվող կարգավորման գործառույթների շրջանակում նախատեսվում է՝

- Էներգետիկայի բնագավառում մշակել ներդրումային ծրագրերի համաձայնեցման, կարգավորվող անձանց կողմից կատարված ներդրումների մասին հաշվետվության ներկայացման և ներդրումային գործունեության վերլուծության կարգը,
- Հանրային կազմակերպությունների կողմից գնումների առանձին գործարքների արդյունավետության ուսումնասիրության և գնումների կարգերի լրացուցիչ պահանջներին համապատասխանության գնահատման նպատակով իրականացնել հանրային կազմակերպությունների 2019 և 2020 թվականների գնումների առանձին գործարքների ընտրանքային մոնիթորինգ, որը ներառում է հանրային կազմակերպությունների կողմից մինչև գնման հայտարարությունն իրականացված շուկայի ուսումնասիրությունների, գործարքների համար կիրառվող գնման մեթոդների ընտրության, մրցութային փաստաթղթերի և մատակարարների ընտրության ընթացակարգերի մոնիթորինգը: Հանրային կազմակերպությունների գնումների առանձին գործարքների ընտրանքային մոնիթորինգի արդյունքները հրապարակվում են հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում,
- Հաստատել խոշոր էլեկտրակայանների 2021 թվականի պայմանագրային և տնօրինելի էլեկտրական հզորությունները, որն իրականացվում է հանձնաժողովի

2017 թվականի մայիսի 17-ի №161Ն որոշմամբ հաստատված՝ ՀՀ էլեկտրաէներգետիկական համակարգի ցանցային կանոնների 16-րդ գլխով սահմանված կարգով և ժամկետներում,

- Վերանայել էլեկտրաէներգետիկական համակարգի խոշոր արտադրող կայանների և ծառայություններ մատուցող ընկերությունների սակագները,
- Իրականացնել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագների հաշվարկներում ներառվող մանրաճախ ջրամատակարարման փաստացի ծավալների մոնիթորինգ,
- Վերանայել «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայությունների մատուցման սակագները,
- «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության կողմից իր սպասարկման տարածքի հրապարակվելիք ջրամատակարարման գրաֆիկի համաձայնեցում Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի հետ,
- Սահմանել արտակարգ պատահարների արագ արձագանքման ծառայության 112 (911), հրշեջ ծառայության 101, Հայաստանի Հանրապետության ոստիկանության 102 և շտապ օգնության 103 համարներին կատարվող կանչերի (հաղորդագրությունների) դեպքում օպերատորի կամ ծառայություններ մատուցողի կողմից իր հաճախորդի (բաժանորդի) կողմից օգտագործվող ծառայության վայրի վերաբերյալ տեղեկությունների (հաճախորդի տեղորոշում) և հաճախորդի անձնական տվյալների բացահայտելու կարգը: Կարգով կսահմանվեն տեղորոշման համակարգի գործարկման պայմանները, տեղորոշման բացահայտման ժամկետներն ու համակարգի տեխնիկական նախագծի համաձայնեցմանը ներկայացվող պահանջները:
- «Հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներից ելնելով՝ հաստատել հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճար վճարողների 2020

թվականի անվանական կազմը և հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարների տարեկան դրույքաչափերը,

- Հրապարակել ամփոփ տեղեկատվություն դատական գործերի վերաբերյալ:

ՀՀ հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2021 թվականի գործունեության ծրագրի հիման վրա կմշակվի հանձնաժողովի 2021 թվականի տարեկան աշխատանքային ծրագիրը, որտեղ ըստ ժամանակացույցի կարտացույցվեն հանձնաժողովի գործունեության ծրագրով նախատեսված կոնկրետ աշխատանքները: Հանձնաժողովի 2021 թվականի տարեկան աշխատանքային ծրագիրը կհրապարակվի հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում:

Եռամսյակային արդյունքներով կամփոփվեն և հանձնաժողովի պաշտոնական ինտերնետային կայքում կհրապարակվեն՝

- սպառողների սպասարկման որակի ցուցանիշների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- սպառողների դիմում-բողոքների վերաբերյալ էլեկտրական էներգիա, բնական գազ և խմելու ջուր մատակարարող ընկերությունների կողմից ներկայացված տեղեկատվությունը,
- էլեկտրաէներգետիկական, գազամատակարարման համակարգերի և ջրային ոլորտի կարգավորվող ընկերությունների գործունեության տեխնիկատնտեսական ցուցանիշները: